## Խումբ N 2 Օրենք

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն ուղևոր է համարվում՝

1. Տրանսպորտային միջոցի սրահում (խցիկում) կամ տրանսպորտային միջոցի վրա գտնվող անձը՝ բացառությամբ վարորդի և վարել սովորեցնողի:
2. Տրանսպորտային միջոցի սրահում (խցիկում) կամ տրանսպորտային միջոցի վրա գտնվող, ինչպես նաև տրանսպորտային միջոցը նստող (բարձրացող) ու դրանից դուրս եկող (իջնող) անձը՝ բացառությամբ վարորդի և վարել սովորեցնողի:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «A» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական կարող է տրվել՝

1. 16 տարին լրացած անձանց:
2. 17 տարին լրացած անձանց:
3. 18 տարին լրացած անձանց:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «E» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական կարող է տրվել՝

1. 17 տարին լրացած անձանց:
2. 18 տարին լրացած անձանց:
3. 19 տարին լրացած անձանց:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ճանապարհի երթևեկելի մաս է համարվում՝

1. Ճանապարհի տարրը՝ նախատեսված տրանսպորտային միջոցների երթևեկության համար:
2. Ճանապարհի տարրը՝ նախատեսված ոչ ռելսազնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հարկադրված կանգառ է համարվում՝

1. Երթևեկության ընդհատումը՝ կապված լուսացույցի արգելող ազդանշանի անսպասելի միացման հետ:
2. Երթևեկության ընդհատումը՝ կապված ճանապարհին գոյացած խցանման հետ:
3. Տրանսպորտային միջոցի անսարքության, վարորդի (ուղևորի) ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակով և (կամ) բեռի փոխադրմամբ պայմանավորված՝ վտանգի կամ ճանապարհին ի հայտ եկած այլ խոչընդոտի պատճառով տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը:
4. Թվարկած բոլոր դեպքերը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անբավարար տեսանելիություն է համարվում՝

1. Ճանապարհի տեսանելիության հեռավորությունը՝ օրվա մութ ժամանակ:
2. Ճանապարհի տեսանելիության հեռավորությունը բնակավայրերում՝ երթևեկելի մասի արհեստական լուսավորվածության բացակայության պայմաններում:
3. Մառախուղի, անձրևի, ձյունաթափի և (կամ) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար այլ անբարենպաստ եղանակի պայմաններում, ինչպես նաև օրվա մութ ժամանակ, աղջամուղջի ու մթնշաղի ժամանակ ճանապարհի տեսանելիություն և (կամ) մինչև 300 մետր տեսանելիության հեռավորություն:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կանգառ է համարվում՝

1. Մինչև 5 րոպե կամ ուղևորի նստելու, իջնելու և (կամ) տրանսպորտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու համար անհրաժեշտ ժամանակով տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը:
2. 5 րոպեից ավելի տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը, եթե դա կապված չէ ուղևորների նստեցման, իջեցման կամ տրանսպորտային միջոցի բեռնման, բեռնաթափման հետ:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց է համարվում՝

1. Կանգառի կետեր (կանգառներ) ունեցող, երթուղիներով շարժվող, ուղևորներ և (կամ) ուղեբեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցը (տրամվայ, տրոլեյբուս, ավտոբուս):
2. Կանգառի կետեր (կանգառներ) ունեցող, երթուղիներով շարժվող, ուղևորներ և (կամ) ուղեբեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցը (տրամվայ, տրոլեյբուս, ավտոբուս), ինչպես նաև թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետիոտներին են հավասարեցվում՝

1. Առանց շարժիչի հաշմանդամային սայլակներով տեղաշարժվող հաշմանդամները:
2. Բեռնասայլակ, սահնակ, մանկասայլակ կամ հաշմանդամային սայլակ քաշող (հրող) անձինք:
3. Թվարկած բոլոր անձինք:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կցորդ (կիսակցորդ) է համարվում՝

1. Կոշտ կցիչով քարշակվող ցանկացած մեխանիկական տրանսպորտային միջոցը:
2. Շարժիչով չկահավորված տրանսպորտային միջոցը, որը նախատեսված է մեխանիկական տրանսպորտային միջոցով շարժման մեջ դրվելու և դրա կազմում որպես մեկ ամբողջություն երթևեկելու համար:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ճանապարհներին սահմանվում է՝

1. Աջակողմյան երթևեկություն:
2. Ձախակողմյան երթևեկություն:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցի ձեռք բերման օրվանից ի՞նչ ժամկետում այն պետ է ներկայացվի հաշվառման՝ ճանապարհային ոստիկանության մարմիններ:

1. 5 օրվա ընթացքում:
2. 10 օրվա ընթացքում:
3. 20 օրվա ընթացքում:

*Խումբ N 2 Օրենք*

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ճանապարհային երթևեկությանը մասնակցող տրանսպորտային միջոցը տեխնիկապես սարքին վիճակում պահպանելու համար պատասխանատվություն կրում է՝

1. Տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ օգտագործողը:
2. Տրանսպորտային միջոցը վաճառած կազմակերպությունը:
3. Տրանսպորտային միջոցի՝ վերջին տարեկան տեխնիկական զննությունն իրականացրած կազմակերպությունը:
4. Թվարկած բոլոր անձինք և կազմակերպությունները:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երթևեկությունը սկսելուց առաջ տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ստուգել՝

1. Արգելակային համակարգի և ղեկային կառավարման սարքինությունը:
2. Անվադողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրության համապատասխանությունը սահմանված նորմերին:
3. Բոլոր թվարկածները:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է օժանդակելու նպատակով տրամադրել տրանսպորտային միջոցը՝

1. Ոստիկանության ծառայողներին՝ շտապ բժշկական օգնության կարիք ունեցող անձանց բժշկական հաստատություն տեղափոխելու համար:
2. Բուժաշխատողներին, որոնք բուժօգնություն ցույց տալու համար մեկնում են համընթաց ուղղությամբ (վարորդի համաձայնությամբ):
3. Երկու դեպքում էլ:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում՝

1. Անմիջապես կանգնեցնել տրանսպորտային միջոցը:
2. Միացնել վթարային լուսային ազդանշանը:
3. Պատահարի մասին հայտնել ոստիկանություն:
4. Կատարել թվարկած բոլոր գործողությունները:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մեխանիկական տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է իր մոտ ունենալ՝

1. Տվյալ կարգի տրանսպորտային միջոցը վարելու վարորդական վկայականը և տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթերը:
2. Լիազորագիր՝ այլ անձին պատկանող տրանսպորտային միջոցը վարելու դեպքում:
3. Թվարկած բոլոր փաստաթղթերը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երթևեկության գոտի է համարվում՝

1. Երթևեկելի մասի գծանշված երկայնական գոտին, որի լայնությունը բավարար է տրանսպորտային միջոցների մեկ շարքով երթևեկության համար:
2. Երթևեկելի մասի գծանշված կամ չգծանշված երկայնական գոտին, որի լայնությունը բավարար է տրանսպորտային միջոցների մեկ շարքով երթևեկության համար:

*Խումբ N 2 Օրենք*

| | |
|---|---|
| «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ թույլատրելի առավելագույն զանգված է համարվում՝<br><br>1. Լրակազմված և լիցքավորված տրանսպորտային միջոցի զանգվածը:<br>2. Վարորդով, ուղևորներով և բեռով բեռնված, լրակազմված ու լիցքավորված տրանսպորտային միջոցի զանգվածը: | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կարգավորող է համարվում՝<br><br>1. Ճանապարհային երթևեկությունը կարգավորելու իրավասություն ունեցող և օրենսդրությամբ սահմանված կարգով այդ կարգավորումն իրականացնող անձը:<br>2. Երթևեկության ցանկացած մասնակից (վարորդ, ուղևոր կամ հետիոտն), որն անհրաժեշտությունն առաջանալու դեպքում կատարում է կարգավորող գործողություններ:<br>3. Թվարկած բոլոր անձինք: |
| «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հեծանիվ է համարվում՝<br><br>1. Առնվազն երկու անիվ ունեցող և դրա վրա գտնվող մարդու մկանային ուժով, մասնավորապես ոտնակի կամ բռնակի օգնությամբ շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոցը, ինչպես նաև հաշմանդամային սայլակը:<br>2. Առնվազն երկու անիվ ունեցող և դրա վրա գտնվող մարդու մկանային ուժով, մասնավորապես ոտնակի կամ բռնակի օգնությամբ շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոցը՝ բացառությամբ հաշմանդամային սայլակի: | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետիոտն է համարվում՝<br><br>1. Տրանսպորտային միջոցից դուրս՝ ճանապարհի վրա գտնվող անձը՝ բացառությամբ ճանապարհի վրա աշխատանքներ իրականացնելու իրավասություն ունեցող և օրենսդրությամբ սահմանված կարգով այդ աշխատանքներն իրականացնող անձը:<br>2. Տրանսպորտային միջոցից դուրս՝ ճանապարհի վրա գտնվող, այդ թվում՝ ճանապարհի վրա աշխատանքներ իրականացնելու իրավասություն ունեցող և օրենսդրությամբ սահմանված կարգով այդ աշխատանքներն իրականացնող անձը: |
| «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցի գործնական վարման սկզբնական ուսուցումը իրականացվում է՝<br><br>1. Բնակավայրերից դուրս՝ ճանապարհներին՝ հաշվի առնելով տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվությունը:<br>2. Փակ հրապարակում կամ ավտոդրոմում:<br>3. Ցանկացած ճանապարհին (բացառությամբ ավտոմայրուղիների)՝ հաշվի առնելով տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվությունը: | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մերձակա տարածքից ելքը դեպի ճանապարհ համարվու՞մ է արդյոք խաչմերուկ:<br><br>1. Չի համարվում:<br>2. Համարվում է: |

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «B», «C» և «D» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական ունեցող անձանց թույլատրվում է դրանք վարել նաև կցորդներով, եթե կցորդի թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում՝

1. 750 կիլոգրամը:
2. 800 կիլոգրամը:
3. 1000 կիլոգրամը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հեծանվորդներին արգելվում է երթևեկել՝

1. Առանց ղեկը բռնելու:
2. Առանց սաղավարտի:
3. Երկու դեպքում էլ:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «B» և «C» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական կարող է տրվել՝

1. 16 տարին լրացած անձանց:
2. 17 տարին լրացած անձանց:
3. 18 տարին լրացած անձանց:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մոպեդ է համարվում՝

1. Մինչև 50 սմ խորանարդ բանվորական ծավալի շարժիչով և մինչև 50 կմ/ժ առավելագույն արագությամբ երկանիվ կամ եռանիվ տրանսպորտային միջոցը:
2. Մինչև 60 սմ խորանարդ բանվորական ծավալի շարժիչով և մինչև 60 կմ/ժ առավելագույն արագությամբ երկանիվ կամ եռանիվ տրանսպորտային միջոցը:
3. Մինչև 70 սմ խորանարդ բանվորական ծավալի շարժիչով և մինչև 70 կմ/ժ առավելագույն արագությամբ երկանիվ կամ եռանիվ տրանսպորտային միջոցը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոց վարել սովորեցնողը՝

1. Հավասարեցվում է վարորդին:
2. Չի հավասարեցվում վարորդին:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վթարային իրադրություն է համարվում՝

1. Երթևեկության մասնակցի գործողության և (կամ) անգործության հետևանքով առաջացած իրավիճակը, որի ժամանակ ստեղծվում է ճանապարհատրանսպորտային պատահարի իրական վտանգ:
2. Երթևեկության մասնակցի և (կամ) կարգավորողի գործողության և (կամ) անգործության հետևանքով առաջացած իրավիճակը, որի ժամանակ ստեղծվում է ճանապարհատրանսպորտային պատահարի իրական վտանգ:

| | |
|---|---|
| «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրվա մութ ժամանակ է համարվում՝<br><br>1. Աշնանը և ձմռանը՝ տեղական ժամանակով երեկոյան ժամը 20.00-ից մինչև առավոտյան ժամը 8.00-ը, գարնանը և ամռանը՝ երեկոյան ժամը 22.00-ից մինչև առավոտյան ժամը 6.00-ն ընկած ժամանակահատվածը:<br>2. Արեգակնային լուսավորության բացակայության ժամանակահատվածը: | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ավտոբուս է համարվում՝<br><br>1. Ուղևորների համար նախատեսված 8-ից ավելի նստատեղ ունեցող, իր կառուցվածքով և կահավորվածությամբ ուղևորների և ուղեբեռի անվտանգ և հարմարավետ փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլը:<br>2. Ուղևորների համար նախատեսված 8 և ավելի նստատեղ ունեցող, իր կառուցվածքով և կահավորվածությամբ ուղևորների և ուղեբեռի անվտանգ և հարմարավետ փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլը: |
| «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ թեթև մարդատար ավտոմոբիլ է համարվում՝<br><br>1. Ուղևորների համար նախատեսված 8-ից ոչ ավելի նստատեղ ունեցող, իր կառուցվածքով և կահավորվածությամբ ուղևորների և ուղեբեռի անվտանգ և հարմարավետ փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլը:<br>2. Ուղևորների (բացառությամբ մինչև 12 տարեկան երեխաների) համար նախատեսված 4-ից ոչ ավելի նստատեղ ունեցող, իր կառուցվածքով և կահավորվածությամբ ուղևորների և ուղեբեռի անվտանգ և հարմարավետ փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլը: | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետիոտներին են հավասարեցվում՝<br><br>1. Շարժիչ ունեցող հաշմանդամային սայլակով՝ հետիոտնի արագությամբ տեղաշարժվող հաշմանդամները:<br>2. Հեծանիվ, մոպեդ կամ մոտոցիկլ տանող անձինք:<br>3. Բոլոր թվարկած անձինք: |
| «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը ծագում է՝<br><br>1. Ճանապարհային ոստիկանության ստորաբաժանումներում տրանսպորտային միջոցներ վարելու գործնական քննությունները դրական հանձնելու պահից:<br>2. Վարորդական իրավունքի վկայական ստանալու պահից: | «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «A» և «B» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու միջազգային վարորդական վկայականները կարող են տրվել՝<br><br>1. 16 տարին լրացած անձանց:<br>2. 17 տարին լրացած անձանց:<br>3. 18 տարին լրացած անձանց: |

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «C» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու միջազգային վարորդական վկայական կարող է տրվել՝

1. 18 տարին լրացած անձանց:
2. 20 տարին լրացած անձանց:
3. 21 տարին լրացած անձանց:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ազգային վարորդական վկայականները տրվում են՝

1. Մինչև 5 տարի ժամանակով:
2. Մինչև 10 տարի ժամանակով:
3. Մինչև 20 տարի ժամանակով:
4. Անժամկետ:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ միջազգային վարորդական վկայականները տրվում են՝

1. Մինչև 1 տարի ժամանակով:
2. Մինչև 3 տարի ժամանակով:
3. Մինչև 5 տարի ժականակով:
4. Անժամկետ:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ճանապարհային ոստիկանության ստորաբաժանումներում վարորդի թեկնածուն կարող է մասնակցել գործնական քննությանը, եթե լրացել է նրա՝

1. 15 տարին:
2. 16 տարին:
3. 17 տարին: